

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևանի պետական համալսարանի Ֆիզիկայի ֆակուլտետի
գիտական խորհրդի 20.11.19թ. կայացած թիվ 5.19-20 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 36 անդամներից 29-ը:

Նիստը վարեց ֆիզիկայի ֆակուլտետի դեկան, պրոֆ. Ռ. Հակոբյանը:

Հաստատվեց հետևյալ օրակարգը՝

1. Հեռակա ասպիրանտների ատեստավորում:
2. Մագիստրոսական թեզերի անվանումների և դեկավարների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Լսեցին՝ հեռակա ասպիրանտների ատեստավորման հարցը:

Ելույթ ունեցան՝ Գ. Հարությունյանը, Ա. Բալաբեկյանը, Ռ. Ալավերդյանը՝ ներկայացնելու համար հաշվետու ժամանակահատվածում ասպիրանտների կատարված աշխատանքները:

Որոշեցին՝ հիմք ընդունելով կատարված հետազոտական աշխատանքների ծավալն ու ամբիոնների դրական եզրակացությունները՝ ատեստավորել 4-րդ տարվա ասպիրանտներ Լիլիթ Արզումանյանին /Գրիգորյանին/, Հայկ Գուրգենի Սարգսյանին, Նվարդ Արամի Սահարյանին, Սուսաննա Վարդանի Գագինյանին, 3-րդ տարվա ասպիրանտներ Հռիփսիմե Կարենի Տերյանին, Էլմիրա Արայիկի Մելյանին, Տաթևիկ Ստյոպայի Մելքումյանին, Տաթևիկ Մակիչի Սարուխանյանին, 2-րդ տարվա ասպիրանտ Շաքե Կարենի Երիցյանին:

Լսեցին՝ Մագիստրոսական թեզերի անվանումների և գիտական դեկավարների հաստատման հարցը:

Ամբիոնների վարիչները ներկայացրեցին մագիստրոսական թեզերի անվանումները և համապատասխան դեկավարներին:

Որոշեցին. ա. Հաստատել "Տեսական ֆիզիկա", "Օպտիկա", "Աստղաֆիզիկա", "Միջուկային ֆիզիկա և ատոմային էներգետիկա", "Պինդ մարմնային նանոֆիզիկա և

նանոնյութեր" ծրագրերով մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողների ավարտական թեզերի անվանումները և գիտական ղեկավարներին:

բ. Հաստատել "Տեսական ֆիզիկա", "Օպտիկա", "Աստղաֆիզիկա", "Միջուկային ֆիզիկա և ատոմային էներգետիկա", "Մակրոմոլեկուլների ֆիզիկա", "Պինդ մարմնի ֆիզիկա " ծրագրերով մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների ավարտական թեզերի անվանումներ և գիտական ղեկավարների փոփոխությունները:

Ընթացիկ հարցերում **լսեցին** "ԵՊՀ կենսագրական հանրագիտարան"-ում տեղ չգտած թերացումների հարցը:

Ելույթ ունեցավ "Պինդ մարմնի ֆիզիկայի" գ/հ լաբորատորիայի առաջատար գիտաշխատող Սամվել Գևորգյանը: Ին էլույթում նա նշեց, որ մանրամասն ուսումնասիրել է բոլոր չափանիշները, որոնց համապատասխան համալսարանականները ընդգրկվել են "ԵՊՀ կենսագրական հանրագիտարան"-ում: Բայց ցավոք սրտի տեղի են ունեցել բացթողումներ, որոնց արդյունքում մի շարք համալսարանականների կենսագրություններ տեղ չեն գտել հանրագիտարանում: Ուստի նա առաջարկեց, որ ամբիոնների վարիչները ավելի ուշադիր ուսումնասիրեն չափանիշները, որպեսզի ցուցակները համալրվեն և հնարավոր լինի դիմել "ԵՊՀ կենսագրական հանրագիտարան"-ի հավելվածը տպագրելու համար:

Ելույթ ունեցավ ֆիզիկայի ֆակուլտետի փոխդեկան Ժակլին Մարտիրոսյան, ով գիտխորհրդի անդամներին և հյուրերին ներկայացրեց առաջիկայում անցկացվելիք ԵՊՀ էքսպոզի մասին տեղեկություն: Նա նշեց, որ 2020թ.-ի գարնանը ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում նախատեսվում է անցկացնել ԵՊՀ էքսպո ցուցահանդեսը, որտեղ յուրաքանչյուր ֆակուլտետ պետք է ունենա իր տաղավարը և ցուցահանդեսի ընթացքում նաև ներկայացուցիչներ, ովքեր կներկայացնեն ֆակուլտետը: Ուստի Մարտիրոսյանը առաջարկեց նախապես պատրաստվել ցուցահանդեսին, կազմել համապատասխան ինֆորմացիոն նյութեր ֆակուլտետի ամբիոնների և գործունեության վերաբերյալ:

Որոշեցին որ յուրաքանչյուր ամիոն կպատրաստի համապատասխան առաջարկներ, հետագայում դրանք քննարկելու և վերջնական տեսի բերելու համար:

Ելույթ ունեցավ մագիստրատուրայի ուսանող Մաքսիմ Սարգսյանը, ով խոսեց "Հայոց լեզու" և "Հայ ժողովրդի պատմություն" առարկաները ոչ պարտադիր դարձնելու որոշման մասին: Նա նշեց, որ այս օրերին բազմաթիվ քննարկումներ և բողոքի ակցիաներ են ընթանում նշված որոշման դեմ: Սակայն որոշումը բխում է բնագիտական ֆակուլտետների ուսանողների շահերից, և իր կարծիքով տեղին կլինեք այդ հարցի վերաբերյալ արտահայտել մեր կարծիքը ևս: Հետևաբար առաջարկեց ֆիզիկայի ֆակուլտետի գիտխորհրդի անունից նամակ ուղարկել նախարարություն՝ արտահարտելու համար մեր դրական կարծիքը որոշման վերաբերյալ, ինչպես նաև որոշ հիմնավորումներ: Հարցի վերաբերյալ ելույթ ունեցան Ռոլանդ Ավագյանը, Համլետ Բադալյանը, Աղավնի Կուտուզյանը, Ատոմ Մուրադյանը, Արշակ Վարդանյանը, Լիլիթ Եզանյանը: Բոլորը համակարծիք էին, որ նշված առարկաները դասավանդելու նպատակահարմարության հարցը պետք է որոշեն ԲՈՒՀ-երի և ֆակուլտետների գիտխորհրդները՝ հաշվի առնելով տվյալ ֆակուլտետի առանձնահատկությունները: Հնչեցին կարծիքներ, որ "Հայոց լեզու" և "Հայ ժողովրդի պատմություն" առարկաներից բազային գիտելիքներ ուսանողները պետք է ստանան դպրոցում, իսկ ԲՈՒՀ ընդունվելիս պետք է ստուգվի նվազագույն գիտելիքների առկայությունը:

28 կողմ 1 ձեռնպահ ձայների մեծամասնությամբ **Որոշեցին** ՀՀ բուհերի ոչ մասնագիտական ֆակուլտետներում "Հայոց լեզու" և "Հայ ժողովրդի պատմություն" առարկաների դասավանդման ոչ պարտադիր լինելու մասին որոշում կայացնելու իրավասությունը բուհի ղեկավարությանը տրամադրելու վերաբերյալ ԿԳՄՍ նախարարության որոշման նախագիծի վերաբերյալ գիտխորհրդի դրական կարծիքը հայտնելու նպատակով սեղմ ժամկետներում պատրաստել նամակ՝ նախարարի անունով: Այդ նպատակով ստեղծել խմբագրական հանձնաժողով հետևյալ կազմով.

Լևոն Ասլանյան, Աշոտ Մելքոնյան, Շուշանիկ Տոնոյան, Հրաչյա Ասատրյան :

Ֆիզիկայի ֆակուլտետի ղեկան՝



Ռ.Ս. Հակոբյան

Խորհրդի քարտուղար՝



Շ.Ա. Տոնոյան